ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

50

ՀՀ ԳԱԱ նախագահության օգոստոսի 16-ի և 26-ի նիստերում, որը վարում էր ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը, քննարկվեցին ակադեմիական գիտության, գրահրատարակչական, կադրային և այլ հարցեր: Գործնական և ստեղծագործական աշխույժ մթնոլորտում վերլուծվեցին փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի 1992—1996 թթ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքները (զեկ.՝ ինստիտուտի տնօրեն, փ.գ.դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Եկմալյան), ՀՀ ԳԱԱ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի հաշվետվությունը 1992—96 թթ. աշխատանքների մասին: Նախագահությունը հավանություն տվեց փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գործունեությանը, նշեց, որ հանրապետության զարգացման արդի փուլում ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը շարունակում է արդյունավետորեն աշխատել երեք ուղղություններով՝ փիլիսոփայության, իրավունքի և հոգեբանության: Հաշվետու շրջանում ինստիտուտի ղեկավարությունը, իր գործունեության հիմքում դնելով գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման պայմանագրային սկզբունքը, ինստիտուտի ողջ գիտական ներուժը կենտրոնացրել է առավել կարևոր մի քանի հիմնահարցերի ուսումնասիրման շուրջը, ուժեղացրել է ինստիտուտի գիտական ծրագրերի հայագիտական ուղղվածությունը, ընդլայնել կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունների ծավալը:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը գործնական մի շարք միջոցառումներ մշակեց փիլիսոփայական ու իրավագիտական ակադեմիական գիտության արդյունավետության բարձրացման համար:

Նախագահությունում

ՀՀ ԳԱԱ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի 1992—1996 թթ. գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին հարցի քննարկման կապակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահությունը նշեց, որ չնայած իր կազմավորման կարճ ժամանակաշրջանին և արդի փուլում գիտության զարգացման հետ կապված դժվարություններին, ՀՀ ԳԱԱ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնին հաջողվել է աշխույժ գիտահետազոտական գործունեության շնորհիվ արժանանալ գիտնականների, հանրապետության պետական կառույցների աշխատողների և լայն հասարակայնության ուշադրությանը: Կարճ ժամանակաշրջանում ավարտվել և հրատարակության է պատրաստվել «Սպիտակի երկրաշարժի սոցիալական հետևանքները» կոլեկտիվ մենագրությունը: Կենտրոնը ձեռնամուխ է եղել աղետների սոցիոլոգիական տեսության մշակմանը, այս գործում համագործակցելով Դելավերի (ԱՄՆ) համալսարանի Աղետների ուսումնասիրման կենտրոնի, Կալիֆորնիայի (ԱՄՆ) ալեմիկ ինժեներական ինստիտուտի, Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի աղետների սոցիոլոգիայի բաժանմունքի հետ: Հնարավոր երկրաշարժից հանրապետության բնակչության նախապատրաստման մեթոդաբանության և ընկալզբունքների մշակման շրջանակներում կենտրոնում ստեղծվել է սեյսմիկ անվտանգության միջազգային նշանի մակետը, մշակվել են նրա կիրառման նպատակները ու մեթոդները քաղաքների խիտ բնակեցված շրջաններում՝ երկրաշարժի դեպքում զանգվածային վարքի ճիշտ կողմնորոշման համար: Այդ մակետն ուղարկվել է տարբեր երկրների առաջատար գիտական կենտրոններ և ՄԱԿ-ի՝ տարերաբային աղետների նախապատրաստման հատուկ կոմիտե, և առաջարկվել է դիտարկել նրա ընդունման և միջազգային կարգավիճակ շնորհելու նպատակահարմարության հարցը:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը հավանություն տալով ՀՀ ԳԱԱ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի 1992—96 թթ. գիտական և գիտակազմակերպական գործունեությանը, դրականորեն գնահատեց նրա կողմից երկրորդ՝ «Հասարակական կարծիքի ուսումնասիրությունները և դրանց գիտական, մեթոդաբանական ապահովումը» գիտական ուղղության ընտրությունը:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը քննարկեց հանրապետության միավոր սահմանների հարցը: Ստեղծվեց նախագահության խորհրդական հանձնաժողով:

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, նախկին փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանի բազմամյա գիտական և գիտակազմակերպական գործունեությունն ու ակադեմիայում ունեցած աշխատանքի մեծ փորձը, նախագահությունը նրան նշանակեց ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական:

ՀՀ ԳԱԱ նախագահության օգոստոսի երկրորդ կեսի նիստերում քննարկվեցին նաև ԳԱԱ հրատարակչության և նրա ենթակայությամբ գործող տպարանների 1992 թ. և 1996 թ. առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունը, ակադեմիայի համակարգում գիտնականների հարելյանները նշելու, ՀՀ միջնակարգ դպրոցներում «Տրամաբանություն» առարկան դասավանդելու անհրաժեշտության և այլ հարցեր:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը հաստատեց ՀՀ ԳԱԱ նախագահությանն առընթեր ազգամիջյան գործընթացների ուսումնասիրության գիտական պրոբլեմային խորհրդի կազմը (նախագահ՝ պրոֆ. Խ. Հ. Բարսեղյան), նախագահությանն առընթեր միջազգային գիտական կապերի կանոնակարգը, համապատասխան գիտական բաժանմունքների որոշումները՝ ֆիզիկա-գիտությունների դոկտոր Լենոնր Աբգարի Ազալովյանին մեխանիկայի ինստիտուտի, ԳԱԱ թղթակից անդամ Ծուրի Հայկի Ծուրությանին՝ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենները ընտրելու վերաբերյալ:

«ՆՊԱՏԱԿ»